

Թիւ 27079  
Նոյեմբեր 17, 1980

Մեծայարգ  
Տիար Լեւոն Ժամկոչեան  
Ուաշինգթոն.

Յարգելի Տիար Ժամկոչեան,

Զեր ստեղծագործութիւններէն Արարատի խորհրդապատկերը, շոշանակի մէջ առնուած, եւ մեզի նուիրուած մեր ձեռնադրութեան տարեղարձին առթիւ, թանկագին ներկայութիւն մըն է ձեր տաղանդին իբրև եւ արտայայտութիւն:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք այս գեղեցիկ յուշանուէրին համար, որ ձեր նկարչական արուեստի յատկանշական մէկ նմոյշն է:

Ուրախութեամբ կը կարդանք զանազան քաղաքներու մէջ կազմակերպուած նկարցական ձեր յաջող ցուցահանդէսներուն մասին, ինչպէս նաեւ մամուլին մէջ զրուած գնահատականները։ Մեր մաղթանքն է որ դուք շարունակէք ընթանալ ձեր որդեգրած ասպարէզին մէջէն եւ նոր ու պատուաքեր յաջողութիւններ արձանագրէք ձեր ստեղծագործական աշխատանքին մէջ։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՄ  
Առաջնորդ